


ՀՈՎՏԱՆՆԵՍ ՊԱՊԻԿՅԱՆ

ԿԱՐՈՏԻ ՃԱՄՓԱՆԵՐ



ԵՐԵՎԱՆ 2008

Շնորհակալություն  
ՆՆ ԱԺ նախագահ ՆՈՎԻԿ ԱԲՐԱՆԱՄՅԱՆԻՆ՝  
գրքի փպագրությանն աջակցելու համար

ՆՏԴ 891.981-94 Պապիկյան  
ԳՄԴ 84 Ն - 4  
Պ 232

Պապիկյան Նովհաննես  
Պ 232 Կարոտի ճամփաներ /Նովհաննես Պապիկյան.- Եր.:  
«Լևոն Միրիջանյան» հիմնադրամ: 2008.- 196 էջ:

«Լևոն Միրիջանյան» հիմնադրամ

Նեղինակը մի քանի անգամ եղել է Արևմտյան Նայաստանի փարբեր վայրերում, և իր ուղեգրությունների արդյունք փպավորություններն ու խոհերն է ներկայացնում, որ կարծես վիրպուալ երկխոսություն լինի կորուսյալ երկիրի հետ:

ԳՄԴ 84 Ն - 4

ISBN 978-9939-53-212-7

ՊԱՊԻԿՅԱՆ Ն., 2008



Անի. Մայր եկեղեցին



Գյումրի. “Ամենափրկիչը”

Միրելի ընթերցող, իմ բարեկամ, իմ հայրենակից, եթե դու ունես մեր կորուսյալ երկրի կարոպը, եթե քեզ համար հարազատ է ու մշտահմա պարմական Նայասրանի տեսականը, արի գրույցի նստենք մի պահ: Ես վստահ եմ, որ ամեն հայ ներքին ցանկություն ու պահանջ ունի գոնե մեկ անգամ քայլելու իր պապենական հողի վրա, ցանկություն ու պահանջ ունի այնտեղ որոնելու ապուպապերի ոտնահետքերը: «Նայրենիքը օրգանապես ազգի մը օրրան է, և դուն ուր ալ ծնած ըլլաս, ուր ալ ապրիս, որ պետության քաղաքացին իսկ ըլլաս, քու օրգանական հայրենիքդ կմնա քու ցեղիդ, քու նախահայրերուդ հողը, հոգ չէ, թե այդ հողին որ մասը կըլլա»: Վազգեն վեհափառի այս ձևակերպումը յուրաքանչյուրիս նոթապետարում գրվող փող է, որ ամեն օր, ամեն պահի բացել-կարդալու ենթակա է, եթե հեռու ենք ապրում այդ սուրբ վայրից, որ կոչվում է Պարմական Նայասրան:

Ուրեմն, սիրելի ընթերցող, հարմար տեղավորվիր, վայելիր քո սուրճը՝ այս գիրքը կարդալով եւ մտովի ճամփորդության ելնելով մեր պապերի երկիր: Երկխոսենք Էրզրի հետ, որ մեր կարոպն է ու մեր հիշողությունը, մեր ապուպապերի օջախի ծուխն ու նրանց հիշողության ծվենը: Նա մեր արմարների հրամայական կանչն է, մեր Նայրենիքը: Նա ոչ հեռու է, ոչ մոտ՝ նա միշտ Ներկա է: Դարձնենք մեր հայացքը նրան եւ ունկնդիր մնանք նրա ձայնին, որ մեր ապուպապերի ձայնն է, մեր անցյալն է ու մեր շարունակությունը:

Նեղինակ

## ԱՐՅԱՆ ԿԱՆՉԻՆ ԸՆԴԱՌԱՋ

Բազմաթիվ են Նայասրանի վերաբերյալ գրավոր հիշատակությունները, ամենաարարքեր առիթներով, համաշխարհային գրական ժառանգության ամենաարարքեր ժանրերում, Քսենոֆոնից մինչև Պուշկին, ապա նաև մեր օրերը: Սակայն երբ վերջապես հայը հնարավորություն ստացավ, թեկուզ և որպես զրոսաշրջիկ, ուրք դնել իր հայրենի, պապենական հողի վրա, երբ պարզ դարձավ, որ մեր երազանքի առաջին քայլն իրականանալի է՝ գեթ մեկ անգամ սեփական աչքերով տեսնելու Եղեմական աշխարհը, ուխտագնացության և ճանապարհորդության երևույթները մեկ այլ խորհուրդ բացահայտեցին, ճանաչողական իմաստը վերամարմնավորվեց որպես Մեծ Նայրենիքի մասին հանրությանն իրազեկելու անհրաժեշտություն: Եվ գերագույն նպատակը՝ մերկ ճշմարտության առջև դեմ հանդիման կանգնելն ու քեզանից խլված արդարության աչքերի մեջ նայելն է դառնում, որովհետև քաջ գիտակցում ես, որ վերադարձիդ երանի են փալու աչքիդ տեսածը ու համբուրելու են աչքերդ, ու ինքդ քեզ հարց ես փալու, թե արդյոք քանի՞ ժողովուրդ է այս աշխարհում որպես ծանոթության լիարժեքության բանալի հարց փալիս դիմացինին՝ ծագումով որտեղի՞ց ես, պապերդ որտեղի՞ց են... Եվ եթե օտարի համար Մեծ Նայասրանը կտրել անցնելը կամ Բիրլիական Արարարի բարձունքը հաղթահարելը անձնական նախաձեռնություն է, ապա քեզ համար դա վերադարձ է դեպի արմարներդ, ինքնաճանաչողություն է և քեզ անվերջ կեղեքող փոհմածառիդ անորոշությունը ցրելն ու քո ազգային և անհատական վերահաստատումն է: Որքան էլ ցավագին ու վիրավորական է պապիդ ձեռամբ ու քրտինքով կառուցած փունդ որպես հյուր այցելելու իրողությունը, այնուամենայնիվ պիտի անսաս ավելի մեծ ու հզոր ուժի՝ կարոպի առ Նայրենիքդ, կարոպի առ Արդարությունը, որը հաճախ սրի ծայրին է, այլ ոչ բանականության և ճշմարտացիության ծիրում: Պիտի փայփայես քո Նաղթանակի երազանքը, որքան էլ որ այն անհավանական թվա... և որքան էլ փորձես քեզանից թոթափել նպատակդ և հաշտվել դառն իրականության հետ, միևնույն է, անուժ ու անկարող ես, որովհետև Աստուծով ու բնությամբ է

քեզ վերապահված վերադարձդ դեպի քեզ, մշտահույժ և չարհրկված, որպեղից գալուդ և ուր գնալուդ հարցադրումը, որպես արհամարհված քաղաքակրթության մասունք... Միանգամայն այլ զգացողություն է, երբ այցելում ես մերձավորիդ, անգամ հորդ շիրմին, երբ նույնիսկ գլխահակ կանգնում ես ընկերներիդ գերեզմանների առջև, ովքեր հանգչում են մի ամբողջ բլրի փարածքում, բայց աննկարագրելիորեն անմարդկային է, երբ քո առջև բացվում է հորիզոնից անդին ձգվող սրբազան հայրենիքիդ աճյունը: Սրբազան պատմությանդ գերեզմանապուրը, որպեղ ուրնակոխ են լինում հարյուր հազարավոր մարդկային կյանքեր, որպեղ ոչնչանում են քո պատմության և մշակույթի, քո ազգային հիշողության բեկորներն անգամ:

Գյումրիից Կարս ձգվող 80 կմ երկարությամբ ճանապարհի փոխարեն անցնում ես 370 կմ ճանապարհ, երկրե երկիր անցնում՝ հանդիպելով հայրենակիցներիդ փասնյակ բնակավայրերում, հայաբնակ գյուղերում, վայելում նրանց խոսքն ու գրույցը, մինչև որ ետևում են մնում Ջավախք աշխարհն ու ազնվազարմ Ախալցխան, և մխրճվում Կարսի փարածաշրջան... Եվ որքան էլ որ խոչոխույթեր առաջադրի քեզ շրջափակումը, միևնույն է, հաղթահարելու ես: Չգիտես, քո երբեմնի երկրում այսօր ապրողին հասկանալի է, թե ոչ, որ դու պարբասար ես նույնիսկ 370 կմ և ավել ճանապարհ անցնել, միայն թե իմաստավորես կյանքդ՝ Կարսն ու Անին, կարսեր և անիներ գեթ ուրք դնելու փեսալականը հաղթահարելը:

Ծովի մակերևույթից 2540 մետր բարձրության վրա ձյան և սառույցի միջից բխում է մի փոքրիկ սառնաղբյուր, չորս բուրն ամայի է, քիչ անց երևում է առաջին բնակավայրը, հետո հաջորդը... Վերջապես Կարսում ենք, արդեն ուշ գիշեր է, սակայն ոչ ոք քնելու ցանկություն չունի, ոչ ոք չի համարձակվում վառնել թանկագին ժամանակը քնի և հանգստի վրա, և մենք զբոսնում ենք գիշերային մութ Կարսում: Նյութանոցի առջևի հրապարակում կանգնեցված է Ադրբեջանի նախկին առաջնորդ Նեյդար Ալիևի կիսանդրին՝ ամեն ինչ պարզ է ու հասկանալի, ավելի խոսուն, քան քաղաքական գործիչների թեական մեկնաբանությունները: Նկարիչ Սամվել Սևադան և փողերիս հեղինակն առաջին անգամ ենք Կարսում, մինչդեռ Նովհաննես Պապիկյանն ու Մարտին Թադևոսյանն արդեն մանրակրկիտ ուսումնասիրել են քաղաքը, բանակցել քաղաքային իշխանությունների հետ՝ Ե. Չարենցի հայրական փուրը կործանումից փրկելու, այն վերակառուցելու և մշակութային հաստատության վերածելու ծրագիրը և այն իրականացնելու համար ստացել մեր հայրենակից, Թուրքիայի քաղաքացի, գործարար Տիգրան Ալթունի ֆինանսական աջակցության համաձայնությունը:

Չարենցյան հիշատակները պեղելու և պահպանելու նպատակը ենթադրում է նաև հայության աշխույժ անցուդարձ Կարսում... Անրաշ քարով շինված փան առջև Կարսի այգին է, Կարինե Քոթանջյանի շունչը՝ ծառերի սաղարթներում, երկաթե կամուրջը, քիչ այն կողմ Վարդանի կամուրջն է, Առաքելոց վանքը, Կարսի բաղնիքները, անթիվ-անհամար բնակելի փներ և վարչական կառույցներ, որոնց ճարտարապետության մեջ ընդգծված է հայոց ձեռագիրը, այն աստիճանի, որ բացարձակապես չես գգում խորթություն կամ օտարություն: Ծրջում ես պարզ հայկական քաղաքով, քեզ գգում ինչպես փանդ, միայն թե օտար են բնակիչները, իսկ ոմանց հայացքում նշմարվում է ծպտյալ և քողարկված հայի թախիծը... Կարսի բնակելի փները Գյումրիի, Ախալքալաքի, Ախալցխայի ճարտարապետական ոճն ունեն: Եվ դու ցանկանում ես կլանել այդ ամենի ոգեղեն ներգործությունը և պահել հիշողությանդ մեջ, ինչպես դրանց արտաքին փեսքը ֆիքսում են Նովհաննես Պապիկյանի և Սամվել Սևադայի փեսախցիկները...

Քաղաքի վրա իշխում է Կարսի բերդը, անառիկ այդ ամբողջը, որը դավադրության զոհ դարձավ անցյալ դարասկզբին, մեր անմիաբանության ազգային ախարանի լենդանի վկայագիրը, որի դեղափոման առ այսօր չունենք: Դու գիտակցում ես, որ քո աչքերով նայում են փասնյակ հազարավոր հայեր, և լեցուն ես լավատեսությամբ, որ մի օր արդարությունը կհաղթանակի, և ուզում ես հավաքալ, որ այդ օրը հեռու չէ, որ Աստված չի հանդուրժի մի երկրի գոյություն, որն իր զբաղեցրած փարածքում չունի անգամ մեկ մետր պատկանական հող...

Չի հանդուրժի կեղծիքն ու սրբապղծությունը, չի հանդուրժի սարքովի պատմությունը, որի խորհրդանիշն ակնառու է Առաքելոց վանքի խաչի փոխարեն փեղադրված կիսալուսնի ու աստղի առկայությամբ, երբ Նայոց Մուրբ փաճարը վերածվում է մզկիթի: Նայոց հրաշագեղ մայրաքաղաք Անիի ամենօրյա թալանն ու մութքի պարսպին արմացված քարի թուրքերեն արձանագրությունը, որպես խոստովանությունը սեփական ամոթի...

Մենք կարասների բեկորներ և հող ենք լցնում փոստակների մեջ որպես սուրբ Մասունքներն այս հրաշագեղ քաղաքի: Տղաները նկարում են կիսավեր վանքեր, եռահարկ կամրջի ավերակներ, փորձում ժապավենի վրա պատկերել ամեն մի մանրուք, անը սրբում, թե հաջորդ այցին գուցե դրանք վերացած լինեն: Ամենուր և ամեն քայլափոխի կահ-կարասիների կավե փշրանքներ են, ամբողջ քաղաքը սփռված է վանքերի ու վարչական-բնակելի շինությունների ավերակներով՝ թանգարան բաց երկնքի փակ: Ականջդ կանչի, Ռոքուել Քենդ: Յավ ես ապրում, երբ ուրիշն է վայելում պատերիդ արարումը և կրկնակի դառնություն, երբ հայրենական սրբությունների հետ վարվում են փմարդի և բարբարոսաբար... Եվ հանկարծ գիտակցում ես, որ նույնիսկ չես հայհոյում քաղաքակրթությունը բռնաբարողներին և զարմանքիդ ի պատասխան անհասցե հարց ես փալիս՝ միգուցե դրանք քո հայհոյանքի՞ն էլ արժանի չեն...

Նովի. Պապիկյանի պատմումն ամեննին չի փեղավորվում հուշագրության, ուղեգրության, շրջանակներում՝ ամփոփելով գուր վավերական փաստագրությունը, այլ համեմված է գեղարվեստական մրածողությամբ, գիտական փաստակերպների համադրությամբ: Նյութը դիմադրություն չունի, և չունի ինքնաարտահայտման արգելքներ. այն բխում է սրտից, հոգուց և գիտակցությունից, այն պոռթկում է՝ ասես մի ամբողջ կյանք սպասել է իր պահին, ժայթքում ինչպես ծովի մակերևույթից մոտ 2500 մ բարձր սառնորակ աղբյուրը՝ մաքուր, զուլալ, անարար... Առանց ավելորդ զգացմունքայնության, առանց անեծքի ու թշնամանքի, այլ մարդկային, գեղեցիկ և իրարեսական: Նեղինակի դիպրոկականությունն ու գերող պատմելաոճը, պատկերավոր և բարձրաճաշակ խոսքը, երևույթների և փաստերի մեկնաբանությունները, ասես, պարտադրված են ներկայացվող նյութով, պատմելու կարողությունը թելադրված է պատասխանավորությամբ ընթերցողի առջև իր ասելիքի հավաստիության վերաբերյալ:

Այս գիրքը հեղինակի անակնկալն է ընթերցողին: Գիրքը, որպես միահյուսված են պատմությունը, գիտությունը և մշակույթը, երևելի գիտնականներ և գրողներ՝ կողք- կողքի պատմության անցյալն ու ապագան: Նա իր նախանշած ուղիով փանում է ընթերցողին ներկայի միջով դեպի ինքնաճանաչում, իր հետքով առաջնորդում Կարս, Անի, Մուշ, իր հայացքով ուղեկցում պատենական կորուսյալ հայրենիքում, պատմում սիրով, կարոտով, անփարար ցավի գրչով:

Նեղինակը հուշում է ընթերցողին, որ այն սրբազան խաչը, որ նախախնամությամբ է ի վերուստ փրված, պիտի կրվի արժանապարվորեն, անվհար, շարունակ բորբոքելով ու վերահասարակելով հավասրը սեփական ուժի և կամքի հանդեպ:

**ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ**

Գրող, հրապարակախոս,

Նայասարանի Ազգային գրադարանի փնօրեն

**Խմբագրի խոսքը**

Յուրաքանչյուր հայի համար պատմական Նայասարանի փեղականը պատկերանում է երբեմն կենդանի, շենշող պատկերներով, երբեմն էլ անորոշ ու աղոտ, մոռացումի մշուշի քողով պարված՝ մինչև իրական հանդիպումը: Նանդիպման պահից սկսած՝ հիացմունքդ ու ավստասանքդ միաձուլվում են, նախկինում ունեցած պատկերացումներիդ գումարվում է մի անբացափրելի, անպատմելի զգացողություն, անհավանական, երևակայական մի աշխարհ, և

հետո փեսածոյ ու զգացածոյ վերապրելոյ, ընկալելոյ, յուրացնելոյ, վերհիշելոյ, վայելելոյ հետ մեկտեղ մշտապես ունենում ես վերստին այնպեղ լինելոյ անհազ մի ցանկություն, ափսոսանք, որ դեռ շարք բան մնաց փեսնելոյ, ու ամեն հաջորդ անգամը մի փեսակ ավելի կարոպած ես ուրք դնում ապուպապերիդ մամռակալած ուրնահետքերին:

Մեր հայացքը մշտապես այն հրաշք արժեքներին պահելոյ, դրանք մոռացումից փրկելոյ, մամռակալած արահետները բանուկ դարձնելոյ հորդոր է այս գիրքը պարմական Նայաստանի հիասքանչ կոթողների կենդանի շունչն զգալոյ ցանկություն է նաև, անթեղված կարոպ ու հիշողություն:

Լրագրող, հրապարակախոս Նովհաննես Պապիկյանի՝ փարիներ շարունակ փայփայած լուսե երազը՝ փեսնել ապուպապերի երկիրը, շոշափել ամեն բար ու թուփ, խոյակ ու քիվ՝ իրականացավ, և նրա ապրումների, մտորումների, նրա կարոպի բարձրաձայնումն է այս գիրքը, որ ներկայանում է ընթերցողին իր կենդանի պարկերներով, իր պերճ նկարագրություններով, մեծերի վկայություններով, և յուրաքանչյուր մեկը, ով դեռ չի հասցրել լինել Պարմական հայրենիքում, այս գիրքը կարդալուց հետո կունենա այն գոնե մեկ անգամ փեսնելոյ փափագը:

«Կարոպի ճամփաներ» գրքում զեպրեղված հսկայական ճանաչողական նյութերին, կարծես թե պարահամար, կարծես թե հենց այնպես, բայց իրապես շարք անհրաժեշտ՝ միաձուլվել են նաև լրագրային, հրապարակախոսական հոդվածներ, որոնք անցյալի դասերով մեր ներկա կեցությունն ու պահվածքը ճիշտ կազմակերպելուն ուղղված խորհրդածություններ են, այսօր մեզանում, ի մասնավորի, սահմանամերձ շրջաններում կուրակված շարք ցավոպ խնդիրների լուծման իրապեսական, արդարացի փարբերակների առաջադրումներ նաև:

Գրքի որոշ մասը հարվածաբար փայագրված է եղել մամուլում: Այդ հոդվածները գրվել են սիրով, կարոպով ու, երևի թե, նաև պարոքի զգացողության թելադրանքով: Այդ թելադրանքը երկրի կանչն է, որ իր վրա սևեռվող ուշադրության է կարոպ: Ահա այդ ուշադրության հրավերն էր անում հոդվածագիրն այն ժամանակ ու հիմա՝ այս գրքով:

Նա մի քանի անգամ գնաց պապենական երկիր, անցավ մեր ապուպապերի մամռոպած ուրնահետքերով, փեսավ, ճանաչեց հայ ճարտարապետության գնայելի կոթողները, հայ մշակույթի հիասքանչ արժեքները: Նրա ամեն այցելություն արմարների կանչ էր, հոգու կանչ, հայրենի կանչ, որ որևէ սահման ու ժամանակ չի ճանաչում: Այս մասին է նա գրում: Եվ նրա գրքում բնավ էլ զերակշռող չէ նկարագրական ժանրը՝ ինչպես գնաց, ուր եղավ. նա իր զգացողությունն է գրում ու այդ զգացողության փերը դարձնում ընթերցողին: Տերը դարձնում ու փրամադրում՝ ինքն էլ իր աչքով փեսնի, ասել է՝ այս գիրքը նաև հրավեր է՝ գնալ Էրզիր, հոգու աչքերով նայել այն ամենին, ինչը կորուսյալ է ժամանակի առումով, ինչը հարագապ է ու կարոպալի, ինչը մերն էր ու մերն է... Նաև այս առումով է հեղինակի վերաբերմունքը գնահատելի, նրա նկարագրությունները՝ հուզական ու ապրումների թելադրանք: Նա զգուշությամբ, երկյուղածությամբ է խոսում մեր կորուսյալ երկրի հրաշալիքների մասին, երկյուղածությամբ, որովհետև երկրի այդ հրաշալիառության գնահատանքներն այնքան շարք, այնքան դիպուկ ու զեղեցիկ արդեն եղել են, որ իր ասածն ընդամենը մի շուղ պիպի ավելացնի այդ բոլոր գնահատականներով հյուսած բնին:

«Կարոպի ճամփաներ» գրքի սրեղծման հիմնական առիթն, անշուշտ, Եղիշե Չարենցի ուրնահետքերի փնտրոպուն է եղել: Պոետի հայրական փունը Կարսում գրնելով, սրամբուլաբնակ հայ բարերար Տիգրան Ալթունի աջակցությամբ մոպ ապագայում թերևս, այն լիովին վերակառուցելով ու հայկական մշակութային կենտրոն դարձնելով՝ Կարսում մի նոր ուխտապետի ունենալոյ հիանալի հեռանկար է բացվում: Այդ հրաշալի գործը ձեռնարկող խմբի (դրա մեջ է նաև գրքի հեղինակը) նախանձախնդիր վերաբերմունքը մեծ արձագանք զոպ մեզանում, և լրագրային մի շարք հրապարակումներ եղան՝ այդ փաստի խրախուսում որպես: Այդ առիթով էր, որ ես հանդիպեցի պոետի փունն առնելուն, վերակառուցելոյ ճախսերը հոգալուն պարտապական բարերար Տիգրան Ալթունին, որի հետ գրույցի արդյունքում գրված

հողվածը ոչ միայն երևանյան թերթում փպագրվեց, այլև Լուս Անջելեսում հրատարակվող «Նամայնապարկեր» ամսագրում:

«Տունը ես կառնիմ, դուք փունը պահելու մասին խորհեք», - այսպես ասաց Տիգրան Ալթունը, երբ հարցազրույցի համար նրան հանդիպեցի Սամվել Սևադայի արվեստանոցում: Մարտին Թադևոսյանն ու Նովհաննես Պապիկյանն էին Տիգրանին ուղեկցել Սամվելի արվեստանոց: Սամվելը պատրաստվել էր այս հանդիպմանը. արվեստանոցում նա իր գեղանկարների, լուսանկարների շարքում ցուցադրում էր Կարս քաղաքի՝ ամբողջական և առանձին՝ Եղիշե Չարենցի հայրական փան մեծադիր լուսանկարները:

...Ծրագիրը հեղեղյալ է՝ Կարսում մինչ օրս պահպանված Աբգար աղայի՝ Եղիշե Չարենցի հոր կիսաքանդ փունը՝ հարակից 300 քմ փարածքով, որպես սեփականություն, փրամադրվում է Տիգրան Ալթունին: Վերջինս իր միջոցներով գնած փունը վերակառուցում է հայ բարերար իր այլ ընկերների համարեղ ներդրումներով: Կառուցվում է երկհարկանի մի գեղեցիկ փուն՝ առաջին հարկում թեյարան, երկրորդում՝ Չարենցի անվան մշակույթի կենտրոն՝ բանաստեղծի կյանքի ու գործունեության մասին վկայող փաստերով, լուսանկարներով, գրքերով ու այն ամենով, ինչը չարենցյան շունչ ու ոգի կներշնչի այցելուներին:

...Այսօր խնդրո առարկա փունն առնելու, Կարսում Եղիշե Չարենցի անվան հայկական մշակույթի կենտրոնի ստեղծման ճանապարհի առաջին հաստատուն քայլն է արվում, ու դրանում վիթխարի է Տիգրան Ալթունի ներդրումը, նրա բարեհաճ վերաբերմունքը հայ մեծանուն բանաստեղծի անվան հավերժացման, հիշարակի պահպանման գործում:

Շափ հաճելի էր, որ պոեթի հայրական փան հեղ կապված, այսպես ասած, շարժումը արձագանքներ ունեցավ հարկապես երիտասարդների շրջանում, ովքեր անգամ պատրաստակամություն հայտնեցին գնալ Կարս՝ կամովին մասնակցելու փան վերակառուցման աշխատանքներին, և այս գիրքն էլ բարերար ազդեցությունը կթողնի այդ վերաբերմունքին:

Եվս մի հանգամանքի վրա ուշադրություն դարձնենք. գիրքն ունի «Մանրապատումներ» բաժին, ուր գեղեղված են գողտրիկ ակնարկներ այն մարդկանց մասին, ում հեղ հեղինակը եղել է պարմական Նայաստանում:

Մի շնչով կարդացվող ակնարկները բնութագրում են այդ մարդկանց, բացում նրանց ներաշխարհը, բացահայտում էրգրի հանդեպ ունեցած նրանց կարոտն ու վերաբերմունքը:

...Ընթերցենք այս գիրքը, մտովի մեզ պարկերացնենք Չարենցի հայրական փան մոլ ժամերով շվարած ու մտամոլոր թափառող այն «խենթի», Առաքելոց եկեղեցու շուրջը պրույթ եկող, զարդաքանդակները մեկիկ-մեկիկ շոշափող այն «անտունի», Անիի Մայր փաճարը հազար անգամ նկարահանող այն «հուսահատ» լրագրողի դերում, ու փորձենք մեր հայացքը դարձնել ազգային անանց արժեքներին, քանզի, իրավ, «Սրբավայրը ուխտավորի է այնքան ժամանակ, քանի դեռ ուխտավոր ունի»:

ՇՈՒՇԱՆԻԿ ՍԱՆԱԿՅԱՆ

*Շորունակելի*